



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

#### ՈՐՈՇՈՒՄ №- 23Լ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի երրորդ մասի 5-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

#### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել դատական գործի վիճակագրական դասակարգիչները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սահմանել դատական ակտի որոնման դասակարգիչները՝ համաձայն հավելված 3-ի:

4. Սահմանել դատական գործի համարակալման կարգը՝ համաձայն հավելված 4-ի:

5. ՀՀ դատական ղեկարտամենտի ղեկավարին.

Սահմանել գործավարության կանոնների կիրառման հետ կապված փաստաթղթերի օրինակելի ձևերը և վավերապայմանները:

6. Այն դատարաններում, որտեղ առկա է «Դատական համակարգ» կառավարման համակարգը, գործավարությունն իրականացվում է բացառապես այդ համակարգի միջոցով:

7. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության**

**վճռաբեկ դատարանի նախագահ**

2007թ. դեկտեմբերի 21

ք.Երևան

(լրաց. 11.02.2008թ. ԳՆԽ թիվ 05Լ որոշում )  
(լրաց. 13.06.2008թ. ԳՆԽ թիվ 14Լ որոշում )  
(փոփոխ. և լրաց. 22.12.2008թ. ԳՆԽ թիվ 25Լ որոշում )  
(փոփոխ. 10.04.2009թ. ԳՆԽ թիվ 09Լ որոշում)  
(փոփոխ. 03.03.2010թ. ԳՆԽ թիվ 06Լ որոշում)  
(լրաց. 17.03.2011թ. ԳՆԽ թիվ 04Լ որոշում )  
(լրաց. 21.07.2011թ. ԳՆԽ թիվ 08Լ որոշում )  
(փոփոխ. 19.10.2012թ. ԳՆԽ թիվ 19Լ որոշում )

Հավելված 1  
Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների խորհրդի  
2007թ. դեկտեմբերի 21-ի թիվ 23Լ  
որոշման

**Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ  
ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**1. Ընդհանուր դրույթներ**

1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության դատարանների) գործավարության կանոնները սահմանում են Հայաստանի Հանրապետության դատարաններում գործավարության միասնական համակարգը և իրականացման կարգը, որի ճշգրիտ վարումը կարևոր պայման է գործող օրենսդրության ճիշտ կիրառման, դատարանի բնականոն աշխատանքների ապահովման, Հայաստանի Հանրապետության դատարանների փաստաթղթաշրջանառության հաշվառման, դատավարական և այլ փաստաթղթերի ձևակերպման համար:

2. Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները ստեղծում են բարենպաստ պայմաններ Հայաստանի Հանրապետության դատարաններում գործերի և այլ փաստաթղթերի ստացումը, հանձնումը և ընթացքն ապահովելու, դատական գործերը ողջամիտ ժամկետում քննելու, դատավճիռների, վճիռների, որոշումների կատարման հանձնելու, դատական գործերի և այլ փաստաթղթերի ընթացիկ և արխիվային պահպանման, ինչպես նաև արդարադատության այլ խնդիրների իրագործման համար:

3. Սույն Կանոններով օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

ա) աշխատող՝ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի դատական ծառայող, դատական կարգադրիչ,

տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատող և ժամկետային աշխատանքային պայմանագրով աշխատող.

բ) փաստաթուղթ՝ թղթային կրիչի վրա արտացոլված ցանկացած պահանջ կամ տեղեկատվություն(դիմում-բողոք), այդ թվում՝ դատական ակտ, դատական գործ.

գ) հսկողական փաստաթուղթ՝ որոշակի ժամկետում պարտադիր կատարման ենթակա կոնկրետ հանձնարարությամբ փաստաթուղթ.

դ) մուտքի մատյան՝ դատարան մուտք եղած փաստաթղթի մուտքի գրանցման մատյան.

ե) ելքի մատյան՝ դատարանից ելք արվող փաստաթղթի ելքի գրանցման մատյան.

է) դատական գործ՝ դատարան ներկայացված հայցադիմումների, քրեական գործերի, ինչպես նաև մինչդատական վարույթում ներկայացված միջնորդությունների հետևանքով կազմվող վարույթ.

ը) համակարգչային ծրագիր՝ «Հայաստանի Հանրապետության դատական համակարգ» կառավարման ծրագիր.

թ) հաշվառման քարտ՝ դատական գործով դատավարական գործողությունների, ինչպես նաև այլ տեղեկություններ պարունակող քարտ:

ժ) գրասենյակ՝ դատարանի բոլոր նստավայրերում գործող և համապատասխան լիազորություններով օժտված կառուցվածքային ստորաբաժանում կամ դատական ծառայող:

4. Հայաստանի Հանրապետության դատարաններում գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության դատական, քրեական, քաղաքացիական, վարչական դատավարության օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի որոշումներին, սույն կանոններին և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները պարտադիր են դատավորների և աշխատողների համար:

6. Աշխատողը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնների պահանջները կատարելու, ծառայողական փաստաթղթերի պահպանման, նրանցում գտնվող

տեղեկությունների՝ օրենքով չնախատեսված կարգով հրապարակման համար:

7. Գործավարություն իրականացնող յուրաքանչյուր աշխատող պետք է տիրապետի սույն կանոններին, մեթոդներին, գործող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության պետական, այդ թվում՝ դատական համակարգի կառուցվածքին, քրեական, քաղաքացիական և վարչական իրավունքի հիմնարար դրույթներին:

8. Հայաստանի Հանրապետության դատարաններում գործավարությունը կազմակերպվում և իրականացվում է համակարգչային ծրագրի օգտագործման միջոցով կամ պարզ թղթային ձևով: Պարզ թղթային ձևով գործավարությունն իրականացնելիս գրասենյակում վարվող փաստաթղթերը պարունակում են նույն պարտադիր վավերապայմանները, որոնք առկա են համակարգչային ծրագրում այնքանով, որքանով դրանք կիրառելի են պարզ թղթային ձևով գործավարության վարման նկատմամբ: Թղթային կրիչի վրա զետեղված վավերապայմանները պետք է արտացոլեն համակարգչային ծրագրում առկա վավերապայմանների հիմնարար պահանջները:

9. Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարությունը տարվում է հայերեն: Այլ լեզվով ներկայացված փաստաթղթերին պետք է կցվեն դրանց վավերացված հայերեն թարգմանությունը՝ բացառությամբ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի:

(լրաց. 11.02.2008թ. ԴՆԽ թիվ 05L որոշում )

## **2. Հայաստանի Հանրապետության դատարանների**

### **գործավարության ղեկավարումը**

1. Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարությունը ղեկավարում են դատարանի նախագահը, աշխատակազմի ղեկավարը և գրասենյակի պետը:

2. Դատարանի նախագահը և աշխատակազմի ղեկավարն իրականացնում են գործավարության ընդհանուր ղեկավարում՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքին, այլ օրենքներում առկա դատավարական նորմերին, սույն Կանոններին և այլ իրավական ակտերին համապատասխան:

3. Գործավարության անմիջական ղեկավարումն իրականացնում է աշխատակազմի գրասենյակի պետը, իսկ գրասենյակում՝ գրասենյակի ավագ մասնագետը՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքին, «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, սույն Կանոններին և այլ իրավական ակտերին համապատասխան:

4. Գատարանի արխիվի գործավարությունն իրականացնում է Գատարանի աշխատակազմի արխիվապահը՝ «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, սույն Կանոններին և այլ իրավական ակտերին համապատասխան:

### **3. Գատարան մուտք եղած փաստաթղթերի ստացման, գրանցման և հաշվառման կարգը**

1. Գատարանում ստացված բոլոր փաստաթղթերը, բացառությամբ դատական նիստի ընթացքում ներկայացված և արձանագրված փաստաթղթերի, ընդունվում, ստուգվում, գրանցվում (հաշվառվում) են դատարանի գրասենյակում, այնուհետև հանձնարարության (մակագրության) համապատասխան անմիջապես հանձնվում են ըստ պատկանելիության:

1.1 Գատավորին մակագրված փաստաթղթերը, բացառությամբ Արդարադատության խորհրդի և Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի գրությունների, հանձնվում են դատավորին կամ դատավորի օգնականին:

2. Փաստաթղթերը դատարան ներկայացվում են առձեռն կամ փոստային (սուրհանդակային) ծառայության միջոցով:

3. Փաստաթղթերն առձեռն ստանալիս գրասենյակի պատասխանատու դատական ծառայողն ստուգում է փաստաթղթի ամբողջականությունը՝ կից փաստաթղթերի ցանկի կամ որևէ փաստաթղթի, փաստաթղթի հավելվածի հետ: Ներկայացված փաստաթղթի ամբողջականությունն ստուգելուց հետո գրասենյակի պատասխանատու դատական ծառայողը փաստաթղթի պատճենի կամ երկրորդ օրինակի վրա դնում է փաստաթղթերի ստացման դրոշմակնիքը, նախատեսված մասում լրացնում ստացման ամսաթիվը (անհրաժեշտության դեպքում ժամը) և փաստաթղթի ստացումը հավաստում է իր ստորագրությամբ:

4. Բոլոր ծրարներն ու փոստային առաքումները, բացառությամբ «գաղտնի» նշում ունեցողների, բացվում են գրասենյակի պատասխանատու դատական ծառայողի կողմից:

5. Գաղտնի փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է համապատասխան լիազորություն ունեցող հատուկ նշանակված աշխատողի կողմից:

6. Ծրարները կցվում են ստացված փաստաթղթերին և պարտադիր պահպանվում են դրանց հետ: Մեկ ծրարով ստացված մի քանի առանձին փաստաթղթերի դեպքում ծրարը կամ պատճենահանվում և կցվում է բոլորին, կամ կցվում է փաստաթղթերից մեկին՝ մյուսների վրա կատարելով համապատասխան նշում ծրար պարունակող փաստաթղթի համարի մասին:

7. Գրասենյակի պատասխանատու դատական ծառայողն ստուգում է ստացված փաստաթղթերի, ծրարների, փաթեթների և այլ փոստային առաքումների հասցեների ճշտությունը, փաստաթղթերի և ծրարների ամբողջականությունը, ուղարկված գործերի և նյութերի համապատասխանությունը ցուցակին, դրոշմում է փաստաթղթերի մուտքի դրոշմակնիքով, նշում ստացման ամսաթիվը, տեսակավորում, գրանցում մուտքի մատյանում, այնուհետև հանձնարարության (մակագրության) համապատասխան հանձնում ըստ պատկանելիության:

8. Եթե առձեռն ներկայացվող փաստաթղթերում հայտնաբերվում է կից փաստաթղթերի ցանկի հետ որևէ անհամապատասխանություն կամ որևէ փաստաթղթի, փաստաթղթի հավելվածի, գործի հատորի կամ իրեղեն ապացույցի բացակայություն, ապա այդ դեպքում համապատասխան ուղղում կատարելու համար տեղեկացվում է ներակայացնողին: Համապատասխան ուղղումը չկատարելու կամ փաստաթուղթը վնասված լինելու դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն (ակտ)՝ երեք օրինակից, որի մեկ օրինակը տրվում կամ փոստով ուղարկվում է հանձնողին (փաստաթուղթը ստորագրած անձին), երկրորդը կցվում է ստացված փաստաթղթին, իսկ երրորդը պահվում է գրասենյակում:

9. Եթե փոստային ծառայության միջոցով ստացված փաստաթղթերում հայտնաբերվում է կից փաստաթղթերի ցանկի հետ որևէ անհամապատասխանություն կամ որևէ փաստաթղթի, փաստաթղթի հավելվածի, գործի հատորի կամ իրեղեն ապացույցի բացակայություն, ապա այդ դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն (ակտ)՝ երեք օրինակից, որի մեկ օրինակը ուղարկվում է առաքողին, երկրորդը կցվում է ստացված փաստաթղթին, իսկ երրորդը պահվում է գրասենյակում:

Ակտն ստորագրում է փաստաթուղթն ստացող գրասենյակի պատասխանատու դատական ծառայողը և գրասենյակի պետը:

10. Դատարան ստացված փաստաթղթերից գրանցման ենթակա չեն՝

- գովազդային տեղեկատվությունները, շնորհավորական նամակները և հրավիրատոմսերը.
- դատական ծանուցագրերը, հայցադիմումի և դիմումի պատճենի ստացումը հավաստող փաստաթուղթը, ելք արված այն

փաստաթղթերը, որոնք վերադարձվել են դատարան՝ սխալ հասցեի և հասցեատիրոջը չհանձնելու պատճառով:

11. Գատարան ստացված փաստաթղթի վրա դրվում է գրանցման դրոշմը, նշվում է ստացման ամսաթիվը և մուտքի հերթական համարը: Գրանցման դրոշմը դրվում է փաստաթղթի առաջին էջի ներքևի աջ անկյունում այնպես, որ չաղավաղվի փաստաթղթի գրառումը: Փաստաթղթի աջ անկյունում դրոշմակնքելու անհնարինության դեպքում դրոշմակնիքը դրվում է փաստաթղթի ազատ մասում:

(լրաց. 13.06.2008թ. ԳՆԽ թիվ 14Լ որոշում )

(լրաց. 21.07.2011թ. ԳՆԽ թիվ 08Լ որոշում )

#### **4. Գատարան մուտք եղած փաստաթղթերի կատարման**

##### **նկատմամբ հսկողությունը**

1. Գատարան մուտք եղած հսկողական փաստաթղթերի կատարման նկատմամբ հսկողություն են իրականացնում հսկողություն սահմանելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք:

2. Փաստաթղթերի կատարմանը վերաբերող ցուցումները տրվում են մակագրությունների ձևով, որոնցում նշվում են կատարողը (կատարողները), աշխատանքի բովանդակությունը, կատարման ժամկետը:

3. Այն փաստաթղթերը, որոնց կատարումը վերաբերում է մի քանի պաշտոնատար անձանց, փոխանցվում են հաջորդաբար կամ բազմացվում են, բնօրինակը հանձնվում է պատասխանատու կատարողին (առաջին հասցեատիրոջը), որը պարտավոր է կազմակերպել կատարումը, իսկ պատճենը՝ համակատարողներին: Փաստաթղթի հետագա փոխանցումը կատարողին իրականացվում է գրասենյակի աշխատողի միջոցով, որն այդ մասին նշում է մուտքի մատյանում:

4. Փաստաթուղթը համարվում է կատարված այն դեպքում, երբ քննարկվում են նրանում ներկայացված բոլոր հարցերը, և որի հիման վրա դիմողին ըստ էության սպառիչ պատասխան է տրվում, կամ կատարվում են հանձնարարված աշխատանքները:

5. Փաստաթուղթը հսկողությունից կարող է հանվել միայն հսկողություն սահմանած պաշտոնատար անձի կողմից կամ պատասխան փաստաթուղթը ելքագրվելու դեպքում:



6. Սահմանված ժամկետում փաստաթղթի կատարման անհնարինության դեպքում կատարողը նախօրոք, բայց ոչ ուշ, քան կատարման ժամկետը լրանալուց 1 օր առաջ, զեկուցագիր է ներկայացնում հսկողություն սահմանած ղեկավարին՝ փաստաթղթի կատարման ժամկետը երկարաձգելու առաջարկով: Ժամկետի երկարացման վերաբերյալ մուտքի մատյանում կատարվում է համապատասխան նշում:

## **5. Դատարանից ելքագրվող փաստաթղթերի ստացման, գրանցման, հաշվառման և առաքման կարգը**

1. Բոլոր փաստաթղթերը, բացառությամբ դատական նիստի ընթացքում անմիջապես հանձնվող փաստաթղթերի, առաքվում են դատարանի աշխատակազմի գրասենյակի միջոցով: Դրանք գրանցվում են համապատասխան ելքի մատյանում:

2. Ելքագրվող փաստաթղթերը և դրանց պատճենները հանձնվում են գրասենյակ, որտեղ ստուգվում են ելքի համար ստացված փաստաթղթի հասցեագրման ճշտությունը և կից փաստաթղթերի առկայությունը:

3. Մի քանի հասցեատերերի առկայության դեպքում պետք է նշված լինի այն որոշակի հասցեատերը, որին ուղարկվում է փաստաթուղթը (*օրինակ՝ «V» նշանը դնելու միջոցով*):

4. Գրասենյակի աշխատողը ելքային փաստաթղթի վրա նշում է ելքի ամսաթիվը, հերթական համարը և առաքում հասցեատիրոջը: Իսկ ելքագրվող փաստաթղթերի պատճենները կցվում են կարգագրին՝ ժամանակագրային կարգով, և/կամ դատական գործին:

5. Բոլոր փաստաթղթերն առաքվում են փոստային, սուրհանդակային ծառայությունների, դատարանի ցրիչի կամ առձեռն հանձնելու միջոցով:

6. Փոստային կամ սուրհանդակային ծառայությունների միջոցով առաքումը կատարվում է պատվիրված նամակներով և պատվիրված հանձնման ծանուցմամբ նամակներով: Այս դեպքում կազմվում է պատվիրված փոստածանրոցների և նամակների առաքման ցուցակ, որի մեկ օրինակը մնում է դատարանում և ժամանակագրային կարգով կցվում է կարգագրին, իսկ մյուս օրինակը՝ տրվում առաքումն իրականացնող կազմակերպությանը:

Փոստային կամ սուրհանդակային ծառայությունների միջոցով առաքվելու դեպքում փաստաթղթի պատճենին կամ երկրորդ օրինակին կցվում է համապատասխան անդորրագիր, կամ կատարվում է համապատասխան նշում:

7. Փաստաթղթերը դատարանի ցրիչի միջոցով կամ առձեռն հասցեատիրոջը հանձնելու ժամանակ գրանցվում են փաստաթղթերի ելքագրման մատյանում և ստացողի կողմից գրավոր ստացականի կամ փաստաթղթի պատճենի վրա համապատասխան նշում կատարելուց հետո հանձնվում նրան: Այս դեպքում ստացականում կամ պատճենի վրա պարտադիր նշվում է հանձնված փաստաթղթի անվանումը, կից հանձնվող փաստաթղթերի թերթերի քանակը, ինչպես նաև ստացողի անունը, ազգանունը, հանձնման ամսաթիվը, անհրաժեշտության դեպքում՝ նաև ժամը, որը ստորագրվում է ստացողի կողմից, այնուհետև կցվում է փաստաթղթի պատճենին:

8. Պատասխան ենթադրող ելքագրված փաստաթղթերի կատարող դատական ծառայողները հետամուտ են լինում պատասխանի ստացմանը:

## **6. Դատարան մուտք եղած դատական գործերի ստացման, գրանցման, հաշվառման և փոխանցման կարգը**

1. Դատարան մուտք եղած դատական գործերը (քրեական, քաղաքացիական, վարչական, սնանկության, առևտրային արբիտրաժի և այլն) ստացվում են դատարանի գրասենյակում՝ փաստաթղթերի ստացման կարգի համաձայն:

2. Դատարանի քննարկմանը ենթակա դատական գործերը գրանցվում են հաշվառման քարտերում: Այն դատարաններում, որտեղ մի քանի նստավայրեր կան, դատական գործերը հիմնական նստավայրում ստանալու դեպքում գրանցվում են մուտքային մատյանում և մակագրությանը համապատասխան՝ հնարավորինս սեղմ ժամկետում հանձնվում են համապատասխան տարածքը սպասարկող գրասենյակի պատասխանատու դատական ծառայողին: Դատարանի նստավայրը սպասարկող գրասենյակի պատասխանատու դատական ծառայողը ստացված դատական գործը

գրանցում է հաշվառման քարտերում: Եթե դատական գործը ստացվում է տվյալ տարածքը սպասարկող նստավայրում, ապա այն անմիջապես գրանցվում է հաշվառման քարտում և հանձնվում տվյալ տարածքը սպասարկող դատավորին:

2.1 Գատարանի նստավայր սխալմամբ մուտքագրված այն հայցադիմումները, որոնք չպետք է մուտքագրվեին տվյալ նստավայրում, ոչ ուշ քան հաջորդ օրն ուղարկվում են դատարանի նախագահին:

3. Գրասենյակի պատասխանատու դատական ծառայողը պարտավոր է յուրաքանչյուր գործի ընթացքին համապատասխան մանրամասն լրացնել հաշվառման քարտերի բոլոր վավերապայմանները:

4. Յուրաքանչյուր դատական գործ դասակարգվում է վիճակագրական դասակարգիչներով (համաձայն հավելված 2-ի):

5. Յուրաքանչյուր դատական գործին տրվում է համար (համաձայն հավելված 4-ի):

6. Գատական գործի համարը նշվում է գործի կազմի վրա և հաշվառման քարտում:

7. Գատական գործի համարն անփոփոխելի է:

8. Օրենսդրությանը համապատասխան թերությունները վերացնելու համար հայցադիմումը (դիմումները) և դրան կից փաստաթղթերը վերադարձնելիս գրասենյակում պահվում են դրանց պատճեններով կազմված գործերը: Թերությունները վերացնելուց հետո դրանք կրկին ներկայացնելու դեպքում, դատական գործի գրանցումը և հաշվառումը շարունակվում է ընդհանուր հիմունքներով: Եթե գործը կրկին դատարան է մուտքագրվում դատարանի կողմից սահմանված ժամկետների խախտմամբ, ապա այդ գործը մուտք է արվում որպես նոր գործ, որին տրվում է նոր համար:

9. Առարկայական կամ տարածքային ընդդատությամբ ուղարկված դատական գործի հետ փոխանցվում է տվյալ գործի հաշվառման քարտը:

Առարկայական կամ տարածքային ընդդատությամբ ստացված դատական գործի հաշվառման քարտը շարունակում է վարել գործն ստացած դատարանի գրասենյակը:

10. Գատական գործերից մաս անջատելու և առանձին վարույթով քննելու դեպքում այն անջատված մասով գրանցվում է ընդհանուր հիմունքներով որպես նոր գործ, որին տրվում է հերթական համար:

Անջատված դատական գործի վարույթը ներառում է դատարանի կնիքով վավերացված հիմնական գործի բոլոր փաստաթղթերը:

11. Դատական գործերի միացման դեպքում դատական գործի համար է համարվում ավելի վաղ (ավելի փոքր հերթական համար ունեցող) գրանցում ստացած գործի համարը: Միացված դատական գործի հաշվառման քարտում կատարվում է համապատասխան նշում գործերի միացման և գործի համարի մասին:

12. Բոլոր դատական գործերը կարվում են կազմի մեջ, որի վրա նշվում է գործի համարը, կողմերի կամ այն անձի ազգանունը, անունը, հայրանունը, ում վերաբերյալ գործը քննվել է, գործի անվանումը, բնույթը:

13. Նախաքննության մարմիններից ստացված քրեական գործերով կարող է օգտագործվել այն կազմը, որում գործը կարվել է: Կազմի վրա արվում են համապատասխան նշումներ (գործի հերթական համարը և այլն): Եթե նախաքննության մարմիններից ստացված քրեական գործը դատարանի կողմից կարվել է նոր կազմի մեջ, ապա գործում պետք է պահվի նաև հին կազմը: Ընդ որում, եթե գործը բաղկացած է մեկից ավելի հատորներից, ապա դրանցից յուրաքանչյուրի կազմի վրա նշվում է նաև հատորի հերթական համարը:

14. Դատական գործում կարվում են դատավարության մասնակիցների (կողմեր) ներկայացրած բոլոր փաստաթղթերը, ապացույցները (բացառությամբ իրեղեն ապացույցների), գործի հետ կապված դատարանի կողմից իրականացվող դատավարական գործողությունները հավաստող փաստաթղթերը, էլեկտրոնային կրիչները, ինչպես նաև գործի հետ կապված այլ փաստաթղթեր:

14.1. Դատական գործի վերջում կարվում է դատական գործում եղած փաստաթղթերի վերաբերյալ ցուցակ: Դատական գործը կարվելուց հետո՝ դատավարական օրենսդրությամբ նախատեսված նոր փաստաթղթեր գործին կցվելու դեպքում կազմվում է նոր, լրացուցիչ ցուցակ՝ նախկին ցուցակի համարակալումը շարունակելով: Նոր փաստաթղթերը և լրացուցիչ ցուցակը կարվում են հիմնական գործում:

15. Յուրաքանչյուր դատական գործի հատոր բաղկացած է առավելագույնը 120 էջից: Դատական գործում փաստաթղթերը կարվում են ըստ ստացման ժամանակագրական հերթականության՝ բացառությամբ կատարված գործողությունը հավաստող փաստաթղթերի, որոնք կարվում են

գործողությունը հավաստող փաստաթղթից հետո (օրինակ՝ դատական ծանուցագրից հետո կցվում է ծանուցագիրն ուղարկելը կամ ստանալը հավաստող փաստաթուղթը):

16. Այն դեպքերում, երբ բողոքարկվում է այնպիսի դատական ակտ, որի քննությունը վերադատության կարգով խոչընդոտում է գործի հիմնական քննությանը, սպա հիմնական գործը քննող դատարանում գործից առանձնացվում է բողոքարկվող մասի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները (եթե անհրաժեշտ է գործն ամբողջությամբ, սպա գործում առկա բոլոր փաստաթղթերի պատճենները)՝ կազմելով գործի հավելված:

Դատական գործի հավելվածը կազմվում է դատական գործի կազմման համար նախատեսված կարգով:

17. Դատական գործի հավելվածն ուղարկվում է վերադաս դատարան, դատական գործն ուղարկելու կանոններին համապատասխան: Վերադաս դատարանը բերված բողոքը քննելուց հետո գործի հավելվածն ուղարկում է գործը քննող դատարան: Հիմնական գործը քննող դատարանում վերադաս դատարանից գործի հավելվածը ստացվելուց հետո այն կցվում է հիմնական գործին: Գործի հավելվածի մասին նշում է կատարվում հիմնական գործի փաստաթղթերի ցանկում:

18. Դատական գործի հետ կապված դատավարական գործողություններ կատարելիս, եթե գործը չի գտնվում դատարանում և հնարավոր է այդ դատավարական գործողությունը կատարել առանց դատական գործի, կազմվում է դատական գործի հավելված: Նման դեպքում դատական գործի հավելվածի կազմի վրա գրվում է հիմնական գործի համարը, «Հավելված» բառի նշումով և դատավարական գործողության նկարագիրը: Դատական գործի հավելվածը դատավարական գործողությունները ավարտելուց հետո ուղարկվում է համապատասխան դատարան հիմնական գործին կցելու համար:

19. Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ օրենքով սահմանված ժամկետներում ներկայացվում է վճռաբեկ բողոքը, սպա վերաքննիչ դատարանը բողոքի պատճենը ստանալու օրվանից ոչ ուշ, քան հաջորդ օրը, իսկ դրա անհնարինության դեպքում սեղմ ժամկետում պարտավոր է գործը պատշաճ ձևով ուղարկել վճռաբեկ դատարան:

20. Հայցի ապահովման, հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին միջանկյալ դատական ակտի դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքում նոր դատական

ակտ կայացնելուց հետո ոչ ուշ քան, երկու օրվա ընթացքում գործն ուղարկվում է առաջին ատյանի դատարան:

Սույն կետում նշված վերաքննիչ դատարանի դատական ակտերը ստանալու մասին փաստաթղթերը ստացվելու դեպքում, վերաքննիչ դատարանի գրասենյակը դրանք ուղարկում է առաջին ատյանի դատարան գործում կարելու համար:

21. Այն դեպքում, երբ դատարանի կողմից կայացված ակտի դեմ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետից ուշ և գործը գտնվում է առաջին ատյանի դատարանում, ապա առաջին ատյանի դատարանը ստանալով վերաքննիչ դատարանից բողոքի պատճենը ոչ ուշ, քան մեկօրյա ժամկետում գործն ուղարկում է վճռաբեկ դատարան:

22. Գատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացվելուց և տվյալ ակտն օրինական ուժի մեջ մտնելու համար օրենքով սահմանված ժամկետն ավարտվելուց 3 օր հետո բողոք չստացվելու դեպքում, դատարանի գրասենյակի պետը նախագահող դատավորին է ներկայացնում տեղեկանք բողոքի բացակայության մասին: Նշված տեղեկանքի հիման վրա նախագահող դատավորը, իսկ նրա բացակայության դեպքում տվյալ դատարանի այլ դատավոր, գործում առկա գործն ըստ էության լուծող դատական ակտի վրա կատարում է համապատասխան նշում՝ ակտի օրինական ուժի մեջ մտնելու մասին, որը վավերացվում է նրա ստորագրությամբ և կնիքով: Տեղեկանքը կարվում է դատական գործին: Գատարան գործը ոչ ավել քան 5 օրվա ընթացքում ուղարկում է համապատասխան դատարան:

(փոփոխ. և լրաց. 13.06.2008թ. ԳՆԽ թիվ 14Լ որոշում )

(լրաց. 21.07.2011թ. ԳՆԽ թիվ 08Լ որոշում )

(փոփոխ. 19.10.2012թ. ԳՆԽ թիվ 19Լ որոշում )

## **7. Գատարան գործերին և փաստաթղթերին**

### **ծանոթանալու և տրամադրելու կարգը**

1. Գատական գործերին և փաստաթղթերին ծանոթանալու համար դրանք տրամադրվում են դատարանի շենքում նախատեսված հատուկ սենյակում, դատական ծառայողի, դատական կարգադրիչի պարտադիր ներկայությամբ:

2. Գատական գործերն ուղարկվում են աշխատակազմի ղեկավարի կողմից ուղեկցական գրությամբ, որում նշվում է գործի համարը, անվանումը, հատորների և թերթերի քանակը, ինչպես նաև գործը պարտադիր դատարան վերադարձնելու անհրաժեշտությունը: Գործի ուղարկման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը կարվում են կարգագրում, որի մասին նշում է կատարվում համապատասխան հաշվառման քարտերում և հաշվառման մատյանում:

3. Գատական գործերում գտնվող փաստաթղթերի բնօրինակները օրենքով սահմանված կարգով ներկայացնողների խնդրանքով կարող են նրանց վերադարձվել գործով վերջնական դատական ակտ կայացնելուց և օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Գործում թողնվում են տրված փաստաթղթերի պատճենները՝ վավերացված դատավորի կամ աշխատակազմի կնիքով: Գործից փաստաթղթի բնօրինակի ստացման մասին ստացող անձը պետք է ստորագրի գործում թողնված փաստաթղթի պատճենի վրա: Նշված փաստաթղթերը փոստով առաքվելու դեպքում կատարողը համապատասխան նշում է կատարում գործում թողնված փաստաթղթի վրա, որը կցվում է գործին: Գործից վերադարձվող փաստաթղթի պատճենը պետք է կարվի գործի այն էջում, որտեղ եղել է բնօրինակ փաստաթուղթը:

4. Գատական գործերը և փաստաթղթերն առաքվում են փաստաթղթերի առաքման կարգի համաձայն:

## **8. Գատական քննության ընթացքում կատարվող դատավարական գործողությունների և դատական ակտերի կատարման ներկայացման կարգը**

1. Գատական քննության ընթացքում կատարվող դատավարական գործողությունների և դատական ակտերի կայացումից հետո կատարման ներկայացման համար նախատեսվող փաստաթղթերի նախագծերը կազմվում են դատավորի օգնականի կողմից, որը վավերացնում է տվյալ գործը քննող և ավարտած դատավորը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տվյալ դատարանի նախագահը:

2. Ցանկացած դատավարական կամ կատարման ենթակա գործողություն դատավորի գործավարի կողմից գրանցվում է հաշվառման քարտում:

2.1 ՀՀ վերաքննիչ դատարանից՝ դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, դատական գործերը 5 օրվա ընթացքում ուղարկվում են համապատասխան դատարան:

2.2 ՀՀ վճռաբեկ դատարանից՝ ավարտված դատական գործերը գրասենյակ հանձնելուց հետո՝ 5 օրվա ընթացքում ուղարկվում են համապատասխան դատարան:

3. Քրեական գործով դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց կամ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանից գործը վերադարձնելուց հետո 3 օրվա ընթացքում դատավորի օգնականի կողմից կազմվում են դատարանի որոշումն ի կատար ածելու վերաբերյալ համապատասխան կարգադրություններ և գրություններ, որոնք վավերացվում են դատավորի կողմից և դատարանի որոշման պատճենի հետ ուղարկվում այն ի կատար ածող մարմնին:

4. Դատարանի կողմից կայացված վճիռներն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պետական տուրքերը բռնագանձելու մասով, ինչպես նաև պահանջատիրոջ դիմումի հիման վրա կազմվում է կատարողական թերթ: Կատարողական թերթերի կազմման պատասխանատվությունը կրում է դատավորի օգնականը:

(լրաց. 17.03.2011թ. ԳՆԽ թիվ 04Լ որոշում )

## **9. Ավարտված դատական գործերի գրասենյակ**

### **հանձնումը և արխիվացումը**

1. Ավարտված դատական գործերով դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ քաղաքացիական գործերով 8 օրվա, քրեական գործերով՝ 15 օրվա ընթացքում դատավորի օգնականի կողմից հանձնվում են գրասենյակ: Գրասենյակի համապատասխան դատական ծառայողը գործն ընդունելիս ստուգում է հաշվառման քարտի ամբողջականությունը, գործի բոլոր էջերի առկայությունը և ճշտությունը, կատարում է համապատասխան



նշումներ, որից հետո 5 օրվա ընթացքում գործերը հանձնվում են դատարանի արխիվ:

2. Դատարանի արխիվից դատական գործը հանվում է համապատասխան հայտ-պահանջագրի հիման վրա՝ աշխատակազմի ղեկավարի թույլտվությամբ: Հայտ- պահանջագրում պետք է նշվի պահանջվող դատական գործի համարը, անվանումը, պահանջի նպատակը և ժամկետը:

Հայաստանի Հանրապետության դատարանների արխիվից գործը հանվում է համապատասխան փաստաթղթի հիման վրա՝ ՀՀ դատական ղեկարտամենտի ղեկավարի թույլտվությամբ:

3. Դատարանների աշխատակազմերի արխիվապահոցներում դատական գործերը պահպանվում են 2 տարի, որից հետո հանձնվում են Հայաստանի Հանրապետության դատարանների արխիվ:

4. Դատական գործերի պահպանությունն իրականացվում է դատարանի աշխատակազմերի արխիվներում և Հայաստանի Հանրապետության դատարանների արխիվում: Դատական գործերը պահպանվում են օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված ժամկետներով:

4.1. Դատական գործերը, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետները լրանալուց հետո ոչնչացման հանձնելու դեպքում, Դատական ղեկարտամենտի ղեկավարի կողմից կազմված փորձագիտական հանձնաժողովի կողմից առանձնացվում են կարևորություն ներկայացվող դատական գործերը կամ դրանց միջից առանձին փաստաթղթեր, մասնավորապես՝ իրավունք հավաստող բնօրինակ կամ պատճեն փաստաթղթերը և պահվում դատական ակտի և արձանագրության հետ անժամկետ:

5. Արխիվապահոցներում դատական գործերը և փաստաթղթերը դասակարգվում են ըստ խմբերի այնպես, որ ապահովվի դրանք հեշտ և արագ գտնելու հնարավորությունը:

(փոփոխ. և լրաց. 22.12.2008թ. ԴՆԽ թիվ 25Լ որոշում )

Հավելված 3

Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների խորհրդի  
2007թ. դեկտեմբերի 21-ի թիվ 23Լ որոշման

## **ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **1. Սեփականության իրավունք**

#### **1.1 Սեփականության իրավունքի ճանաչում**

ա. Ձեռքբերման վաղեմության ուժով

#### **1. բնակարանի նկատմամբ**

2. հողամասի նկատմամբ

3. շենքի, շինության նկատմամբ

4. այլ գույքի նկատմամբ

բ. Տիրագուրկ գույքի նկատմամբ

1. անշարժ գույքի նկատմամբ

ա. բնակարանի նկատմամբ

բ. հողամասի նկատմամբ

գ. շենքի, շինության նկատմամբ

դ. այլ գույքի նկատմամբ

2. շարժական գույքի նկատմամբ

գ. Ինքնակամ կառույցի նկատմամբ

դ. Այլ իրավահարաբերություններ

## **1.2 Մեփականության իրավունքի դադարեցում**

ա. պետական կարիքների համար վերցնելը

բ. գույքի վրա բռնագանձում տարածելը

գ. բռնագրավում

դ. ռեկվիզիցիա

ե. այլ իրավահարաբերություններ

## **2. Օգտագործման իրավունք**

### **2.1 Օգտագործման իրավունքի ճանաչում**

ա. բնակելի տարածության օգտագործման իրավունքի ճանաչում

բ. հողամասի օգտագործման իրավունք/ հարկադիր սերվիտուտ/

գ. այլ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի ճանաչում

## **2.2 օգտագործման իրավունքի դադարեցում**

ա. բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարեցում

1. հատուցմամբ

2. առանց հատուցման

բ. բնակարանից վտարելու վերաբերյալ

գ. այլ իրավահարաբերություններ

## **3. Տիրապետման իրավունք**

### **3.1 գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից**

**ետ վերադարձնելու վերաբերյալ**

ա. բարեխիղճ ձեռք բերողից

բ. անբարեխիղճ ձեռք բերողից

### **3.2 Այլ իրավահարաբերություններ**

**4. Տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումը վերացնելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերություններ**

## **5. Ընդհանուր սեփականության իրավունք**

ա. ընդհանուր սեփականությունից բաժինն առանձնացնելու վերաբերյալ

բ. ամուսինների ընդհանուր գույքը բաժանելու վերաբերյալ

գ. այլ իրավահարաբերություններ

## **6. Գրավի իրավունք**

### **7. Այլ իրավահարաբերություններ**

# ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

## 1. Գործարքի անվավերություն

### 1.1 Գործարքն անվավեր ճանաչելը

ա. վիճահարույց գործարքներ

1. էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքներ
2. խաբության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանգամանքների բերումով կնքված գործարքներ
3. իր իրավունակության սահմաններից դուրս եկած իրավաբանական անձի կնքած գործարքներ
4. այլ հիմքով

բ. առոչինչ գործարքներ

1. կեղծ և շինծու գործարքներ
2. անգործունակ անձի կողմից կնքված գործարք
3. նոտարական ձևը չպահպանելու հետևանքով
4. պետական գրանցման պահանջը չպահպանելու հետևանքով
5. այլ հիմքով

### 1.2 Գործարքը վավեր ճանաչելու վերաբերյալ

#### 1.3 Այլ իրավահարաբերություններ

2. Գործարքից ծագող իրավունքների պետական գրանցում
3. Պայմանագիր

#### 3.1 Պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ

ա. Գույքի օտարման պայմանագրեր

1. Առուվաճառքի պայմանագիր
2. Մանրածախ առուվաճառքի պայմանագիր

3. Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր
4. Ապրանքների մատակարարման պայմանագիր
5. Ապրանքների մատակարարում պետական կարիքների համար
6. Էներգամատակարարման պայմանագիր
7. Ռենտայի պայմանագիր
8. Փոխանակության պայմանագիր
9. Նվիրատվության պայմանագիր

բ. Գույքը վարձակալության և այն անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրեր

1. Վարձակալության պայմանագիր
2. Վարձույթ
3. Տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագիր
4. Շենքի և շինությունների վարձակալության պայմանագիր
5. Բնակելի տարածության վարձակալության պայմանագիր
6. Ֆինանսական վարձակալության պայմանագիր (լիզինգ)
7. Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր

գ. Աշխատանքներ կատարելու պայմանագրեր

1. Կապալի պայմանագիր
2. Կենցաղային կապալի պայմանագիր
3. Շինարարական կապալի պայմանագիր
4. Կապալային աշխատանքներ պետական կարիքների համար
5. Նախագծային և հետազոտական աշխատանքների կապալ
6. Գիտահետազոտական և փորձարարական- կոնստրուկտորական ու տեխնոլոգիական աշխատանքներ կատարելը

դ. Ծառայությունների մատուցման պայմանագրեր

1. Հանձնարարության պայմանագիր
2. Կոմիսիայի պայմանագիր
3. Գործակալության պայմանագիր
4. Պահատվության պայմանագիր
5. Փոխադրման պայմանագիր
6. Տրանսպորտային առաքման պայմանագիր
7. Փոխառության պայմանագիր
8. Վարկային պայմանագիր
9. Ֆինանսավորում դրամական պահանջի զիջման դիմաց (Ֆակտորինգ)
10. Բանկային հաշվի և ավանդի պայմանագրեր
11. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր
12. Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվություն (ֆրանչայզինգ)
13. Ապահովագրության պայմանագիր
14. Առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործունեության պայմանագրեր
15. Խաղեր և գրագ անցկացնելու պայմանագրեր

## 3.2 Պայմանագիրը վավեր ճանաչելու վերաբերյալ

ա. Գույքի օտարման պայմանագրեր

1. Առուվաճառքի պայմանագիր
2. Մանրաձախ առուվաճառքի պայմանագիր
3. Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր
4. Ապրանքների մատակարարման պայմանագիր
5. Ապրանքների մատակարարում պետական կարիքների համար
6. Էներգամատակարարման պայմանագիր
7. Ռենտայի պայմանագիր
8. Փոխանակության պայմանագիր
9. Նվիրատվության պայմանագիր

բ. Գույքը վարձակալության և այն անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրեր

1. Վարձակալության պայմանագիր
2. Վարձույթ
3. Տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագիր
4. Շենքի և շինությունների վարձակալության պայմանագիր
5. Բնակելի տարածության վարձակալության պայմանագիր
6. Ֆինանսական վարձակալության պայմանագիր (լիզինգ)
7. Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր

գ. Աշխատանքներ կատարելու պայմանագրեր

1. Կապալի պայմանագիր
2. Կենցաղային կապալի պայմանագիր
3. Շինարարական կապալի պայմանագիր
4. Կապալային աշխատանքներ պետական կարիքների համար
5. Նախագծային և հետագոտական աշխատանքների կապալ
6. Գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորական ու տեխնոլոգիական աշխատանքներ կատարելը

դ. Ծառայությունների մատուցման պայմանագրեր

1. Հանձնարարության պայմանագիր
2. Կոմիսիայի պայմանագիր
3. Գործակալության պայմանագիր
4. Պահատվության պայմանագիր
5. Փոխադրման պայմանագիր
6. Տրանսպորտային առաքման պայմանագիր
7. Փոխառության պայմանագիր
8. Վարկային պայմանագիր
9. Ֆինանսավորում դրամական պահանջի զիջման դիմաց (Ֆակտորինգ)

10. Բանկային հաշվի և ավանդի պայմանագրեր
11. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր
12. Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվություն (ֆրանչայզինգ)
13. Ապահովագրության պայմանագիր
14. Առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործունեության պայմանագրեր
15. Խաղեր և գրագ անցկացնելու պայմանագրեր

- 3.3 Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում
- 3.4 Պայմանագիր կնքել պարտավորեցնելը
- 3.5 Պայմանագիրը փոփոխելը և լուծելը
- 3.6 Այլ իրավահարաբերություններ

## ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. Կտակն անվավեր ճանաչելու վերաբերյալ
2. Անարժան ժառանգ ճանաչելու վերաբերյալ
3. Ժառանգությունը բաժանելու վերաբերյալ
4. Գույքն անժառանգ ճանաչելու վերաբերյալ
5. Ըստ օրենքի ժառանգության վկայականը անվավեր ճանաչելու վերաբերյալ
6. Ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ
7. Այլ իրավահարաբերություններ

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ամուսնալուծություն
2. Ալիմենտի պահանջ
3. Ալիմենտի չափը փոփոխելու մասին
4. Ծնողական իրավունքից զրկելը
5. Ծնողական իրավունքը վերականգնելը
6. Որդեգրում
7. Որդեգրումը վերացնելը
8. Հայրությունը ճանաչելը
9. Երեխայի բնակության վայրը որոշելը
10. Երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու վերաբերյալ
11. Ամուսնական պայմանագիրը փոփոխելու և լուծելու վերաբերյալ
12. Ամուսինների ընդհանուր սեփականություն
13. Այլ իրավահարաբերություններ

## ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանություն
2. Լիցենզային պայմանագրի լուծումը, փոփոխումը և անվավերությունը
3. Մտավոր գործունեության արդյունքներ ստեղծելու և օգտագործելու պայմանագրի լուծումը, փոփոխումը և անվավերությունը
4. Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ



- ա. հեղինակային պայմանագիր
- բ. համահեղինակություն
- գ. հեղինակային իրավունքների պաշտպանություն
- ե. կատարման իրավունք
- զ. ձայնագրման և տեսագրման իրավունք
- է. հեռարձակելու իրավունք

- 5. Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական մուշի նկատմամբ իրավունք
- 6. Բույսերի նոր սորտերի և կենդանիների նոր ցեղերի նկատմամբ իրավունք
- 7. Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների նկատմամբ իրավունք
- 8. Ֆիրմային անվանում
- 9. Ապրանքային նշան
- 10. Ապրանքի ծագման տեղանուն
- 11. Այլ իրավահարաբերություններ

#### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1. Աշխատանքային պայմանագիր
- 2. Աշխատանքում վերականգնելը
- 3. Գործադուլն անօրինական ճանաչելը
- 4. Հարկադիր պարապուրդի հատուցում
- 5. Չվճարված աշխատավարձի կամ այլ վճարների բռնագանձում
- 6. Այլ իրավահարաբերություններ

#### ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ

- 1. Իրավաբանական անձի գրանցում
- 2. Կորպորատիվ վեճեր
- 3. Իրավաբանական անձի լուծարում
- 4. Իրավաբանական անձի սնանկացում
- 5. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ
- 6. Այլ իրավահարաբերություններ

#### ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

#### ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1. Հողամասի սեփականության իրավունք
- 2. Հողամասի օգտագործման իրավունք
- 3. Հողամասի վարձակալության իրավունք
- 4. Պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի օտարումը
- 5. Այլ իրավահարաբերություններ

#### ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹ

1. Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու վարույթ / Էմանսիպացիա/
2. Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վարույթ
3. Քաղաքացուն հոգերուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վարույթ
4. Քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վարույթ
5. Քաղաքացիական կացության ակտերի գրառումների անճշտությունները պարզելու վերաբերյալ վարույթ
6. Գույքը տիրագործի ճանաչելու վարույթ

ա. անշարժ գույքի նկատմամբ

բ. շարժական գույքի նկատմամբ

## 7. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վարույթ

ա. անձանց ազգակցական կապը հաստատելու վերաբերյալ

բ. անձի՝ ուրիշի խնամքի տակ գտնվելու վերաբերյալ

գ. ծննդյան, որդեգրման, ամուսնության, ապահարզանի և մահվան գրանցման վերաբերյալ

դ. անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահվան վերաբերյալ

ե. ժառանգությունն ընդունելու և ժառանգության բացման վայրի վերաբերյալ

զ. դժբախտ պատահարի վերաբերյալ

է. իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելության վերաբերյալ

ը. սեփականության իրավունքով գույքի տիրապետման վերաբերյալ

թ. անհաղթահարելի ուժի առկայության վերաբերյալ

ժ. իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստերի հաստատման վերաբերյալ

## 8. Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու վարույթ

## 9. Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման վարույթ

## 10. Վճարման կարգադրություն արձակելու վարույթ

## 11. Այլ գործեր

### ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹ

1. Քաղաքացու կյանքին կամ առողջությանն սպառնացող վտանգի վերաբերյալ
2. ՀՀ կենտրոնական բանկի և անվճարումնակ բանկի կամ վարկային կազմակերպության ժամանակավոր ադմինիստրացիայի որոշումների բողոքարկման վերաբերյալ
3. Այլ գործեր

### ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

1. Գատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու վերաբերյալ
2. Գատական ակտի կատարման եղանակի, կարգի փոփոխման վերաբերյալ
3. Կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ
4. Վճռի շրջադարձ կատարելու վերաբերյալ
5. Կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ
6. Այլ գործեր

## **ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

### **1. Պայմանագրային պարտավորություններ**

- ա. գումարի պահանջի մասին
- բ. պարտավորությունը բնեղենով կատարելու պահանջի մասին
- գ. վնասը և բաց թողնված օգուտը հատուցելու պահանջի մասին
